

ՆՈՐՈՐ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻ

Վարչության ԵՄՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Direction du journal NOR-OR Caire

Չհողորհներն են չեն գարձուր, ԱՐՏՈՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆԻՆԻ

Լ Ր Մ Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԶՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲՈՒՄԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Table with subscription rates for various regions and institutions, including prices for 1 year and 6 months.

ԶՈՐԵՐՇԱՐԹԻ 9/22 ՄԱՅԻՍ 1901

ՔԱՍՆ ՓԱՐՍՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 91

ՊԱՏԵՆՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Պ. Յովսեփեան կը ծանուցանէ յարգելի հասարակութեան, որ մօտերս իւր Եգիպտոսէ բարձրօրէն մեկնելուն առթիւ, իւր Պապ-Էլ-Հատիմ փողոցին, Նուպար փառային տան մօտերը գտնուող (Aux articles des voyageurs) վաճառատանց բովանդակ ապրանքները խիստ աժան զինելով ծախուցրուած է (liquidation):

ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՆ ՈՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՆ

Նոր Օր»ի նախորդ թիւերուն մէջ «Հայ Որբանոցները ու Եգիպտահայը» խորագրին տակ հրատարակուած յօդուածի մը մէջ տեղոյս վաճառարականի և Արապիկերի Որբասիրաց Ընկերութիւններու վրայ ընդհանուր տեսութիւն մը ընկէ վերջը, 48 թիւէն ստղին չէինք կրցած շարունակել մեր յօդուածը, որ պիտի պատկանէր Որբասիրամի հոգատար ընկերութեան:

Այսօր առիթը ինքնին կը ներկայանայ այդ յօդուածին մնացեալ մասը ամբողջացնել հետեւեալ շահեկան գրութեամբ որ զրկուած է խմբագրութեան՝ տեղոյս հոգատար Որբասիրամի Ընկերութեան կողմէն: 18 Մայիս 901 Վարչութիւն «Նոր-Օր» լրագրոյ

Միտմը կանխանուէր շնորհակալութեամբ և յարգանքով Արապիկերի Որբերու Հոգատար Ընկերութեան Ընդհանուր Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ Ս. ՉԱԳԻՆՆ Կ. ԳԱՎՓԱՔԱՃԱՆՆ

ՊԱՏՃԵՆ

Գլխաւ ՏՅՈՐԷՍ Խորհրդոյ Որբերու Հոգատար» ընկերութեան հայոց ի Գաղիի թիւ 24

Գաղիի 7 փետրուար 1901

Միտմարտի Վաճառար Էֆենտի Գարիպեան Ատենապետ Պատկ. Ընդհանուր Ժողովոյ Արապիկերի «Որբերու Հոգատար» ընկերութեան ՏՐ,

Խորհուրդ» թէ և փափաքող անցեալ Գիկտ. ամսոյ սկիզբները մատուցանելու իր տարեկան տեղեկագիրն և համարատուութիւնը, ինչպէս կը տրամադրէ ընկերութեան կանոնադրը, բայց իր կամքէն անկախ պատճառներով ցարժ չ'կարողացաւ իր փափաքն կատարել, որու մասին կը խնդրէ Պատկ. Ժողովից ներողամտութիւնը:

Իրաւ է թէ Ժողովը արդէն ճիշտ ու վաւերացուած է ընկերութեան վիցամեայ հաշուեկշիռն 1899 Գիկտ. 1 — 31 Մայիս 1900 — բայց խորհուրդս պատշաճ դատած է յաջորդ վիցամեայ հաշուեկշիռն ալ տեղեկագիրն հետ սրբին մատուցանելով հանդերձ, այդ երկուքն 'ի մի ձուլելով հաւաքական հաշուեկշիռ մը պատրաստել, աճ փոփ գաղափար մը տալու համար ընկերութեան միամեայ բովանդակ գործառութեանց վրայ: Այդ վերջին հաշուեկշիռն կը տեսնուի թէ ընկերութեան նոյն շրջանին մէջ մուտք ունեցած է (9841) զր. ողջ հե. տեւեալ կերպով ստորաբաժնուած:

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Ընկերաց և ընկերուհեաց բաժնեգրներ', 'Նուէրներ', 'Վիճակահանութեան'.

Իսկ ծախք եղած է 6,304,75 զր. ողջ, որու մանրամասնութիւնք են՝ Դիւանական պիտոյք ևայլն 460, 50 Մէկ տարեկան «Մասին» Արապիկերի Որբանոցին 45, — Կիպրոսի Ազգ. Որբանոցը զրկուած երկու որբի ճանքու ևայլ ծախք 403, 75 Արապիկերի Որբանոցին մէջ ըն-

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Կերութեանս պաշտպանած տասներկու (12) որբերուն ասորեմարր', 'Հաւաքելի իրաւունք վճարուած է'.

Այս դամարը հեղշկելով վերոյիշեալ 9841 զր. ողջէն, կ'ունենանք 3,536, զր. 23 ողջ, որու 3,032 զր. ողջ քնած ենք յանուն ընկերութեանս Եգիպ. Գրեմի Գիտնի 3աճ Խոտկուաւոր ու պարզկուտ երեք հատ արձեթուղթեր, աւելցած 304, 25 զր. ողջ ալ 1900 Գիկտ. 31ին կը գտնուէր ընկերութեանս Գանձապետ Մեծ. Տիար փ. Հապիշանի բով:

Խորհուրդս ընկերութեանս երեսական վիճակը հակիրճօրէն պարզել յետոյ կ'աւելցնէ թէ 1. — Ընկերութեանս հաշուական և արձանագրական տուժանքներն տեղոյս Ազգ. Առաջնորդարանին զրոյմեալ և թուագրեալ են կանխաւ, նուստերու արձանագրութիւնք, հաշիւներն հոն արձանագրուած են կանոնաւորապէս, անոնց յետակա պաշտօնադրերն ու ապացուցիչ թուղթերն և ընկերութեանս բոլոր գոյքերն կը գտնուին խորհուրդս Տիար Ատենապետին և Գանձապետին բով:

2. — Խորհուրդս Պատկ. Ժողովից որոշման համաձայն Արապիկերու Ազգ. Որբանոցին մէջ կը պաշտպանէ 12 որբեր, որոց մասին լիակատար տեղեկութիւն կը գտնուէր այնտեղի Առաջնորդարանին եկած կցեալ պաշտօնագրերուն մէջ:

Որբերու պաշտպանութեան պարծն առ այժմ երեք տարուան համար է ու կ'սկսի 1900 Մայիս 1էն: Իւրաքանչիւր որբի սահմանեալ է տարին 5 օսմ. ոսկի, որով 12ին համար վաթսուս ոսկի, խորհուրդս ուրախ է որ այսհաշուէն պարտը չ'ունի Արապիկերի Առաջնորդարանին, ամբողջ տարեկանը բրած ըլլալով շատուց, տարեկանին ընկերութեանս պաշտպանեանքներու անհոգնոյ և այլ նախական ծախս: Համար կ'իմար վճարելի գումար մը, որու հաշիւը կ'սպասուէր Արապիկերի Առաջնորդարանին, ինչպէս նաև հաշիւը արհեստական կրթութեան ծախուց, որ սակայն Պատ. Ժողովոյց ճիշտութեան և վաւերացման կարօտ խնդիր մ'է:

3. — Տեղեկագրի մէջ արդէն յիշուած վիճակահանութիւնը կազմակերպուած է, ինչպէս յայտնի է Պատ. Դիւանից, վաւարականի Որբանոցին Պատ. Գործադիր Ժողովոյ գործակցութեամբ, արդիւնքն երկու բոլոր Ժողովոց շանքերն ու յոյսերը պատկած է լիապէս, 150 եգ. ոսկի տամներն ամբողջովն սպասելն յետոյ, ազգային և օտարազգի բարձրաստիճան անձնաւորութիւն-

ներէ նուէրներ ալ եղած են այս առթիւ: Նոյն վիճակահանութեան արդիւնքն (40) անող. ոսկի կ. Պոլիս Ազգ. Պատրիարքարանի Նպաստից Գանձապետովն զրկուած է, գործածուելու համար ամենակարեւոր գաւառի մը համար չբարձր որբիկներուն պիտոյց: Ընկերութեանս 'ի թերահաշիւ իր բաժնին ըստացած է վերոյիշեալ դամարը, գրեթէ նոյնչափ մ'ալ վաւարականի Որբանոցին մը, և երբ գտնուին բանի մը պահանջներ ալ, որոնց համար ցարժ չ'հրատարակուեցաւ վիճակահանութեան հաշիւը, 5 — 10 օսկի նոր բաժնի մ'ալ կ'ստանայ ընկերութիւնս:

4. — Կիպրոսի Ազգ. Որբանոցին այս տեղի Մեծարոյ ներկայացուցիչներն, խորհուրդին Ատենապետին փափաք յայտնած ըլլալով որ նոյն որբանոցին մէջ բաց մնացած երկու տեղերուն համար ընկերութեան երկու որբ ընտրել, խորհուրդս Պատ. Դիւանից հաւանութեամբ և բացառաբար որոշած է կատարել այդ ընտրութիւններն, եւ ընտրեալներու ճամբու ծախքն ինք հոգալ: Այդ ընտրեալներն մին Բարեբրոցի Շիլա Սողոման Ճիւլմէնեան, հօրմէ որբ և գաւազ չբարձր մօր, արդէն ձիւրաբար ընտրուած է Կիպրոսի Որբանոցին մէջ, որ պիտի մընայ մինչև շրջանաւարտութեան թուականն, երկրորդ ընտրեալը էր վանեցի Գեորգ Մալիաանեան, չբարձր, հօրմ և մօր որբ, զգալի եղաւ այս ճանրարութեան մէջ ալ, շաքաթներով անակնկալ արեղծներով յապաղել յետոյ, որ ուրեքս Աղէքսանդրիայէն շագնաւ նստաւ զէպ 'ի Կիպրոս, որ և հասաւ, բայց այդ միջոցին շոգնաւին մէջ ծանտախտի զէպ մը պատահելուն, շոգնաւոր կ'ախտի վերադառնալ Աղէքսանդրիա, առանց Կիպրոսի ցամաքը ճանրար հանելու, այս պատճառաւ եւ կուզայ Գեորգ Մալիաանեան ալ և չ'ուզէր այլևս երթալ 'ի Կիպրոս:

5. — Եգիպտական երեք Գր. Գիտնիկ արմեթիկներն յանձնուած են տեղոյս Առաջնորդարանին, որ գանոնք 'ի պահ գրած է իր գրամատուցը, Գրեմի Լիտնէ Յաջորդ Տիարին խորհուրդն առաջին անգամ որ գրամի պէտք ունենայ եւ կ'ստանայ զանոնք Առաջնորդարանին և վաճառելով գումարը կ'գործածէ ընկերութեանս նպատակին:

6. — Խորհուրդս նկատելով որ համանպատակ ուրիշ չար ընկերութիւնք գոյութիւն ունին 'ի Գահիթէ և ընկերութեանց անգամակցելով որբերու նպատակու գրութեան բարեկամներն նոյն ընկերութեանց և կու մերինին անգամ են արդէն, շատ հետաճեալ եղած չ'է ընկերաց թիւն աւելցնելու, և ջա-

նազիր գտնուած է այնպիսի միջոցներ ձեռք  
անկելու, որ բնկերութեանց անգամ չ'եղող  
ազգայիններէ և օտարազգիներէ նպաստներ  
ընդունի, որքան է որ այս շահերն մէջ յա-  
շտոյցն է մասամբ:

Խորհուրդս է. Պոլսոյ Ազգ. Պատրիար-  
քարանին զիտողութեանը վրայ, տեղւոյս  
Ազգ. վարչութեան Պատ. Գաղաթափան ժո-  
ղովոյ առաջարկութեամբ և Պատ. Գիւանիդ  
հաստատութեամբ, ընկերութեանս յարաբե-  
րութիւններն ու գրամական առաջուններն Ա-  
րարկիւրի Առաջնորդարանին հետ, ըրած է  
է. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ:

Խորհուրդս իր տեղեկագիրը փակելու մի-  
ջոցին բաղցր պարտականութիւն կը համա-  
րի, իր ջերմ շնորհակալութիւնները յայտնել  
Պատ. Գիւանիդ վայելած աջակցութեանը  
համար, ինչպէս նաև բոլոր այնիս հոգիար-  
տաններուն և «Նոր-Օր» Պատ. լրագրին, որ  
համաձայն ընկերութեանս ազգարութիւնները  
ազգասիրաբար հրատարակել:

Խորհուրդս նկատելով որ իր պաշտօնա-  
վարութեան միամեայ պայմանագրով լրացած  
է, այսու իր հրաժարականը կը մատուցանէ,  
ինչպէսզէպէս իր յաջորդին ընտրու-  
թիւնը:

Մասնք խորին յարգանք  
Գանձապետ Ատենապոլսի Ատենապետ  
Փ. ՏԱԳԷՇԵԱՆ Մ. ԲՐՈՒՏԵԱՆ Ե. ԱՂԱՋԱՐՄ  
Խորհրդակազմ հաշուակալ  
ՅԱԿՈՒ ՔԻՒՐՔԵԱՆ Խ. Գ. ՈՍԿԵՐՉԵԱՆ

Յ Ա Ե Լ Ո Ւ Ա Ն

Ընկերութեանս Ա. տարեշրջանի լրումն  
վերջն, այն է 1900 Գիւլի. 1ին ստղին եղած  
գործողութիւնները կ'ամփոփին հետեւեալ  
կերպով:

1. — Արարկիւրի Առաջնորդարանի Ա. Պոլ-  
սոյ Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ նա-  
մակ մ'եկած է, որուն մէջ որքան անկող-  
նի կայ նոստանական ծախսուց հաշիւ (121/2)  
օտմ. սակի, պահանջած է, խորհուրդս զրկած է  
այն գումարը Պատրիարքարանի միջոցաւ:

2. — Նոյն նամակաւ որքան արձեւտա-  
կան կրթութեան մասին առաջարկ մ'եղած  
է, խորհուրդս տեղեկագրին հետ գա՛յն ևս կը  
զրկէ Պատ. Գիւանիդ, պետք եղածն որոշե-  
լու համար Ընդհանուր Ժողովով:

3. — Խորհուրդս բաղաբն մէջ գոյու-  
թիւն ունեցող ազգատանամ' և արբանամ'  
ուրիշ ընկերութեանց հետ միանալով որ-  
շած է ամսոյս 27ին Օփերայի խաղիկան  
թատրոնին մէջ մի ներկայացում տալ, որու  
գուտ արդիւնքը պիտի բաժնուի իրենց և  
Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի Որբերու  
Ստակին միջև: Կ'ողակցին վերադա՛նուած  
է 'ի նոստան յիշուլ ընկերութեանց վիճա-  
կահանութիւն մը կազմակերպելու ծրագրին:

(Ստորագրութիւնը)

Փ. ՏԱԳԷՇԵԱՆ Ե. Մ. ԱՂԱՋԱՐՄ  
Մ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ Խ. Գ. ՈՍԿԵՐՉԵԱՆ  
ՅԱԿՈՒ ՔԻՒՐՔԵԱՆ  
վաւերացեալ Ընդհանուր Ժողովոյ 1901  
Ապրիլ 28ի նստիւն մէջ:  
Ատենապոլսի Ատենապետ  
Ս. ՉԱԳՐԵԱՆ Վ. ԳԱՒՓԱՔԵԱՆ

Պատ. վարչութիւն  
«Նոր-Օր» լրագրոյ  
ի Գաղաթափս

Ընկերութեանս Ապրիլ 28ի նստիւն մէջ  
կատարուած է շրջանաւարտ Տնօրէ խորհրդոյ  
յաջորդին ընտրութիւնը, որ յետոյ իր Գի-  
ւանը խաղձած է հետեւեալ կերպով:

Տնօրէ Նազարէթ Մ. Ազգաբարձ Ա. Ատե-  
նապետ (վերընտել) Տնօրէ Գորգէն Մի-  
րիճանեան Ատենապոլսի Տնօրէ Մ. Միրան-  
եան Բ. Ատենապետ Տնօրէ Փիլիպոս Հա-  
պէշեան Գանձապետ (վերընտել) Տնօրէ  
Վահան Եփրեմեան Բ. Ատենապոլսի:

Խնդրելով որ բարեհաճիք ներկայս հը-  
րատարակել Ձեր պատուարան թերթին մէջ:

Մասնք յարգանք  
Արարկիւրի Որբերու Հոգաւոր ընկերու-  
թեան Ընդհանուր Ժողովոյ  
Ատենապոլսի Ատենապետ  
Ս. ՉԱԳՐԵԱՆ Վ. ԳԱՒՓԱՔԵԱՆ

ՏՕՔԹ. ՆԵՎՐՈՒԶ

Իր բնակութիւնը փոխադրած է  
Շարա-էլ-Մանսի, նորաշէն Պանք  
Օլթոմանի դէմի կարգը Մէլոն Հէլէր,  
թիւ 8 առաջին յարկ:  
Հիւանդ կընդունի ըստ առաջնոյն  
առ. ժամը 8 և 9. կէս օրէն վերջ  
ժ. 3 և 5:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ  
ՎԵՂ. ԿԱՌՈՂԻԿՈՒՆ Ի ԿԱՐՍ

14 Ապրիլ 1901 ի Կարս

Ուրբաթ Ապրիլ 13ին, կես օրէն յետոյ  
ժամը Յին տեղւոյս Եկեղեցոյ գանձակները  
սկսան հնչել, ինչպէս գալուտան վեհ. Հայրապետին: Կարսի Հայ հասարակութեան  
կողմէն մասնաւոր պատգամաւորութիւն մը  
զիմաւորելու գնացած էր Ն-Սրբութիւնը  
մինչև «Կարս Չայ»: Պատգամաւորութեան  
կ'ընկերանալին նաև Հոովմական Հայոց  
վարդապետը Հ. Կարապետ Գեղարկեան,  
Հայ Հոովմական հասարակութեան տկա-  
նաւոր անդամները, Պարսիկ հիւպատոսը  
սասնակի ձիւտողներով:

Կայարանէն մինչև Ս. Նշան Եկեղեցի  
ճանապարհը յաղթական կոթողներով, ու-  
սնիններով, գափիւններով զարդարուած էր:  
Նշանակելի էր այն յաղթական կամարը որ  
յատկապէս կատարուած էր զոյնզոյն զբո-  
շակներով, որի մէջտեղէն կ'առնուած էր վեհ-  
հափառն մեծագիր պատիկը «Կեցցէ վեհ-  
հափառ Կաթողիկոս ամենայն Հայոց» վեր-  
տառով:

Գոյնզոյն զբոշակներ կը ծածանէին խա-  
նութիւնը, սուններու ձակատները, որոնց  
ծաղրեր կ'անհետանային երբեք գափիւն-  
նիներու և տերևներու շրջանակներու մէջ:  
Ձի կար խառնութիւն մը և կամ տուն մը որ  
մասնակցած չըլլար այս խառնակաւ ցոյցին  
որ կըլուէր ի պատիւ Հայրիկին:

Վերջապէս ժամը 6 1/2 զարկաւ, Ն-  
Սրբութիւն վեհ. Կաթողիկոս հասաւ կա-  
յարան, որով հանդիսաւոր կերպով ստաջ-  
նորուցեալ Եկեղեցի: Եկեղեցոյ գրան առ-  
ջև իրին մատուցուեցաւ առ յարգանս  
հաց ու աղ: Վեհ. ընդունելով հացն ու  
աղը, մտաւ Եկեղեցի ազօթելու:

Երբ Եկեղեցին զուրս կ'եղէր հիւրանոց  
երթալու «կեցցէ» ներս աղաղակներ կը թըն-  
թացնէին բովանդակ բաղաբը: Դիտողա-  
բար շատ բնչեր կըցան համբուրել Ն-Սրբ-  
ութեան աջը, որովհետեւ հակող կատապա-  
րիշ մը կար որ կ'ըսէր անամթարար:

«Որի որ հագուստը նոր է թող մտնէ  
համբուրէ վեհափառին աջը, որի որ հա-  
գուստը հին է թող ետ դնանայ»:

Ժողովուրդին ցանկութիւնը աւելի ան-  
սահման կը դառնար Հայրիկին աջը կամ

զոնէ բզանցը համբուրելու: Անհամբուր-  
կիւրակէ առաւօտեան կը սպասէր ժողովուրդը:  
Բայց, զարմանք և յուսահատութիւն սր-  
բան մեծ եղան երբ իմաց տրուեցաւ պաշ-  
տօնապէս թէ Եկեղեցին փոքր և հին, ու  
ճանապարհը զատ ի վեր ըլլալուն վեհափա-  
ռը չը պիտի կրնայ Եկեղեցի իջնալ:

Նոյն առաւօտուն վեհափառը գնաց այ-  
ցիկելու Հայ-Հոովմականաց Եկեղեցին որ  
նմանապէս զարդարուած էր դրօշակներով,  
տերևներով: Դրսի գոնէ մինչև Եկեղեցի  
ներսի գուռը վեհ. ին անցնելիք ճամբուն  
վրայ Երանկային գորգը փռուած էին: Վե-  
հափառը երբ հասաւ Եկեղեցիի մօտ, ճայ-  
նաւորներ իրենց զուլն ունենալով Հոով-  
մական Հայրը, կրկնով «Հրաշափառ»ը,  
ստաջնորդեցին Չ. Ն. Սրբութիւն Եկեղե-  
ցի: Եկեղեցոյ մէջ վեհ. ին աչքին զարկաւ  
Ս. Լուսաւորի և Խեղրեսարոս պապին պատ-  
կերն որ վերար կը համբուրէին: Գառնա-  
լով ժողովուրդին ըստա. վեհափառը:

«Կը տեսնէք թէ ինչպէս երկու եկեղեցոյ  
հայրապետներ իրարու հետ սիրով և եղ-  
բայրական համբուրի կը համբուրեն: Գուր  
ալ միմեանց հետ սիրով կ'ըլլէ, որովհետեւ  
Գրիտոսնայ մանաւորը մէկ ազգի պատկե-  
ներ էր»:

Այնուհետև վեհափառը այցելեց հիւան-  
դանոցը, Թրքաց և Պարսից միկիթները:  
Պարսից միկիթի ընդունելութիւնը այնքան  
փառաւոր եղաւ և այնքան անբացատրելի-  
րէն շքեղ, որ կրնամ ըսել. մին ըլլայ պատ-  
մական այն հոյակապ գեպրեղէն զոր կըցած-  
է արձանագրել Կարսի Հայոց ազգային ստա-  
մութիւնը իր սովորելի կ'ընուն մէջ: Այո՛,  
այդ հանդիսաւոր ընդունելութիւնը, այդ հա-  
մակարկան շնորհոյցները սկսել հայոց վե-  
հափառ Հայրապետը, ուրիշ բան չէին նշա-  
նակել բայց եթէ Պարսից և Հայոց միջև  
կըլայրական զանազանութեան մը աւետումը:  
Միկիթին զուր գոնէ մինչև ներս ճանա-  
պարհին վրայ փռուած էին կարսու գոնուած  
էն թանկագին գորգերը: Հոծ բազմութիւն  
մը խնուած էր միկիթին զրանը առջև,  
շուրջը, ճանապարհին վրայ ամեն տեղ:

Վեհափառը երբ կարէն կ'իջնէր միկիթ  
մանկու, Պարսիկ երգեցիկ խումբ մը բաղ-  
ձար ձայն երգելով կ'ողջունէր վեհափառին  
գալուստը, մինչդեռ միկիթի կարգացող  
էղան կուտար ժողովուրդին:

«Չմեղ Հայրիկն մի գատէք, կ'ըսէր Պարսից  
աւագանին խօսքը վեհափառն ուղղելով,  
մենք ալ անոնց շափ կը սիրենք ու կը յար-  
զենք զՁերը Սրբութիւն, որի կենացը հա-  
մար բարեմաղթութիւններ կ'ընենք»: Մինչ-  
անկին Պարսիկ ժողովուրդը «ամեն, ամեն»  
ի գոչելով կողար մերթ ընդ մերթ ընդմիջել  
Հայրիկի հասցէին ու զուտած բարեմաղթու-  
թիւնները:

Յետոյ աւագանին ցաւ յայտնեց ու նե-  
րուցութիւն խնդրեց միկիթին փոքր ըլլալուն  
համար, որուն վրայ «Գիտէք թէ Հայր Աբ-  
րահամը միայն փոքրիկ մի վրան ունէր ա-  
զօթելու համար» պատասխանեց վեհափա-  
ռը, ու զմաքած Պարսից առ Հայոց ցոյց  
ստեւած համակարկան արտայայտութիւնն  
ներին «կեցցէ Հայրիկ» ի աղաղակներու մէջ  
կար նստելով զարձաւ վեհափառն:

Վերջին օրը որ պիտի սեկնէր Հայրիկը  
ժողովուրդին յուզումը մեծ էր: Չորսը կը  
սեղմէին կը հրովակէին, Հայրիկը տեսնելու  
Հայրիկին աջը համբուրելու համար:

Ժողովուրդը ըստ չըրաւ, Հայրիկը եր-  
կու երեք անգամ իր օթեանին պատշգամը  
հանել տուաւ ուրիշ Հայրիկին վերջին խօսքը

սա եղաւ. «Գուր կուզէք որ Հայրիկը զուրս  
երէ, ձեզի հետ խօսի, բայց ինչ ընեմ պա-  
ւակներս, գուր Եկեղեցի չունէք, աշխատե-  
ցէք Եկեղեցի մը շինեցէք, իրարու հետ սի-  
րով եղէք, ինչ համար Հայ, Հոովմական,  
Բողոքական, Յոյն ամենք, ալ եղբարներ էք»:

Վեհափառն ի պատիւ երեք զիշեր շա-  
րունակ յուսաւորութիւններ կ'աւարտեց  
զարանին ու Հայոց թաղերուն մէջ:

Վերջին օրը երեկոյան ժամը 4ին վե-  
հափառը ընդունեց նահանգապետին և Պար-  
սից Հիպատոսին կրկին այցելութիւնը, ու  
ժամը 4ու կէսին քստաձի կատրին մէջ նստած  
գնաց Կայարան, որով մեկնեցաւ վայել Աղեր-  
սանկարար: Մեկնած պահուն խանգալաւ  
ցոյցեր կ'աւարտ ամեն կողմանէ:

Վերջապէս վեհափառ Կաթողիկոսին  
ի կարս այցելութիւնը մեծ տպաւորութեան  
տակ թողուց բովանդակ կարեցիկներս:

ԾԻՐԱՋԵՆ

Ծիրազէն «Եկեղեցի» ամսաթերթին  
զրկուած լիցթակցութեան մը մէջ  
լիցթակցից ինչ ինչ ծանօթութիւններ  
կուտայ Ծիրազի հայ գաղութին վը-  
րայօք, ուրիշ հետեւեալ հաստատմանը  
բաղակով կ'արտաստեցներ, իրենց շա-  
հեկանութեանը առթիւ:

Պ. Լիցթակցիցը կըսէ.

Երբնուստանները զարու սկիզբներն Ծի-  
րազայ իշխան Արաշ Վերդի խանի խնդրու-  
նօք Մեծն Շահ Աբրահ 500 տուն հայազ-  
ղի գաղթականներ յուղարկեց 'ի Շիրազ, որը  
բաղաբն այլ և այլ թաղերում և շրջակայ-  
քում հաստատուեցան և հետզհետէ իրենց  
բնաձիր ճարտարութեամբ և առևտրով զար-  
գացան ու ճոխացան. և Շահ Աբրահի խնու-  
տուն բաղաբազմութեան շնորհիւ ամեն  
պաշտպանութիւն և հանդատութիւն վայելե-  
ցին: Որքան ժամանակ այդ մեծ թաղարն  
կենդանի էր, իրենց համար եկեղեցի և  
ճգնաւորական վանս շինեցին, և ամենայն  
ազատութեամբ իրենց ըրիտոնէական կրօ-  
նը պաշտում էին: Բայց յետ այնորիկ այլ  
և այլ ժամանակներում անպիտան իշխանաց  
հարստահարութեանց և հաշտմանց ենթարկ-  
ուեցան, և այլ ևս չկարողանալով համբերել  
հետզհետէ հասաւած առ հասաւած թողին  
փախան Ծիրազուց, իրենց տուն ու տեղ  
ու կալուած 'ի ձեռս Պարսից թողնելով, ինք-  
եանք գաղթեցին 'ի Բուշն, Բաղդադ, և  
Հնդկաստանի բազմաքան:

Այժմ մեան միայն 13 տնալի Հայք,  
որը ոչ թէ յատանց գաղթականութեան մնաց-  
եալ բնիկ Ծիրազեցիք են, այլ վերջերս Նոր  
Ջուղայն եկած գաղթականք են: Սրբա-  
ունին մի փոքրիկ եկեղեցի և Սպահանայ  
գաւառակի Բեսազազ զուղից եկած մի բա-  
հանայ՝ Տեր Ջաղարիկ Մարտիրոսեան ան-  
ուամբ, որն որ մերձ 12 տարի է  
այդ ժողովրդեան հոգուր պաշտօնեայն է:  
Ամսական 6 թուման է ստանում ժողովրդից  
որով հաղի հազ կարողանում է իւր ամենա-  
հարկաւոր պետքեր հոգալ: Թէպէտ Ծիրա-  
զայ Հայ բնակչաց նեթական վիճակ այն-  
քան նախանձելի չէ, բայց և այնպէս կարող  
էին իրենց բահանայն աւելի միտթար ու  
հանդիստ պահել. եթէ երկպառակութիւն ու  
անհամաձայնութիւն այդ փոքրիկ գաղթա-  
կանութեան ոյմերը չը ըլլատէր:

Եկեղեցական շէնքն Շահ Աբրահի ժամա-  
նակի մնացածներն է. սակայն երկրաշար-

ժի պատճառաւ, որ գրեթէ ամեն սարի պատահի, մի բանի անգամ բանալու և կրկին շինուել նորոգուել է: Վերջին նո. նորոգութիւնն 40-50 տարւոյ յառաջ տեղի ունեցաւ: Հարկի մեր Բաշկոյի այն ժամանակին բարեփոխումը և առատաձեւան հայրենակցաց:

Ելեզեցոյ արտարքին մատակարարութիւնն դանձուր է Պարսն Յովաննէս Մ. Տէր Սարգսիանց և Պարսն կարպտեանցի ձեռքն, որը 20 տարուց իրի հոգաբարձութեան պաշտօնը վարում են:

Գիտեք անշուշտ որ Շիրազում վախճանեցաւ մերազգի գրագէտ և անուանի բանաստեղծ Մեհրաբ Քարապետեանց, և նորա գերեզման և շիրմն կայ մինչև ցայսօր Հայոց հանգստարանում: Բարաբրէ կոչուած սարի փառակում: Բարաբրէ ոտքն մի ուրիշ տեսակետով ևս համբաւուր է հայագրագէտ համար: Այդ լեռան վերայ կը գտնուի մի փոքրիկ շէնք ու Հայոց անգրանիկ լրագրի Ազդարարի խմբագիր և հիմնադիր՝ Տէր Յարութիւն Ծմաւունեան բաւական ժամանակ (չիլեմեթ թէ իւր կենաց վերջին տարիներում թէ յառաջագոյն) ձգնութեամբ անցուցած է:

Քարաբաբու Բիրիթոսիսթերուն կոչուած պարսից գերեզմանատուն, որպէս պարսկական անունն ևս յայտ առնէ, առաջին (Շահ Աբասի) զազմակախութեան ժամանակ շինուած վանքերից մին էր, մասնաւորապէս իբրև կուսատան կամ կուսանաց անապատ կոչուէր, նման մեր Զուղայու կուսանաց վանքին, յորում սարկաւագուհիք կը ճզոկէին և բարեխաշտական ու կրթական գործերով կը պարապէին: Երեկ կըր յիշեցաւ ժամանակի Շիրազայ հայ բնակիչը սպանեցան, նման միւս եկեղեցեաց և ազգային հաստատութեանց՝ այն կուսանատան ևս անտիրութեան մատուցելով վերջն Պարսից գերեզմանատուն վարձու, և իբրև յիշատակ Բիրիթոսիսթերուն անունը, որ մեր կուսանատանը բառին համապատասխանէ, և եկեղեցոյ գմբէթի և կուսանաց խուցերի աւերակներ մնացած են մինչև ցայսօր:

Շիրազայ հայագի փոքրիկ զազմակախութեան մէջ վաճառականութեամբ են պարապում Պարսն Սէթ Գ. Արգարեան ընկերք, Յարութիւն Մկրտումեան և որդիք, Յովհաննէս Մ. Տէր Սարգսեանց և եղբայր: Պարոնայք Մարգար Յ. Ամիրխանեան և կարապետ Յ. Կարապետեան յառաջ հեռագրիչներ կեն սնդիկական ընկերութեան մէջ, բայց այժմ գործէ բաշտած լինելով հանգստեան թուշակ են ստանում: Իսկ իւրեանց փոխարեն նոցա երկու որդիք հայրենի արհեստով ըզրազին: Կան նաև մի քանի հայ երիտասարդներ որ դրամատան մէջ կայ կրոնացի վաճառականաց մօտ դրագրութեան պաշտօն են կատարում: Իսկ մնացեալ մի քանի տուն հայերն ըստ մեծի մասին զինեցործութեամբ և զինավաճառութեամբ ապրին:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

«Մուսայատ» լրագիրը կը ծանուցանէ թէ Ե. Բ. Խոտիվը զխաւորութիւն ունի եղեր ներում շնորհել Արապի փաշայի և Ալի Ֆահմի փաշայի, որոնք 1882ին Աղեքսանդրիոյ ապստամբութեան պարագլուխները նրկատուած, ըլլալով արքայութեան էին Սէլյան, ուր կը մնան մինչև ցարդ: Անցեալ տարի Արապի փաշայի եր-

կու օղջիկներն էրիպտոս եկած էին, և նոյն ասունէն ի վեր արգէն դրոյց մը կը ստատէր Արապի վերադառնալու մասին:

— Գասիթի ատողարաշխական գիտարանէն հարգարգուած տեղեկութեանց համաձայն՝ Հարաւային հողմը զիւրանի մ'օր ևս պիտի շարունակէ Գասիթի և շրջակայի բուն մէջ:

— Ինչպէս զիտեք անցեալ տարի թաւալէյի ընկերութեան ընդհանուր վարել Գ. Ֆելիքար յիշեալ ընկերութեան կողմէն՝ հրապարակ հանելու համար իրեն յանձնուած օպիլիակտօնները Աղեքսանդրիոյ հրապարակին վրայ ծանօթ միջնորդներու ծախելէ վերջը, անոնց փոխարեքէր գտնուած ու իւրացուցած էր, որուն համար Աղեքսանդրիոյ պատարանը զինքը բանաստեղծութեան դատարարած էր: Թրակի ընկերութիւնը՝ նախնական գատարան զիմելով յետս պահանջած էր միջնորդներէն՝ Ֆելիքարի իրենց ծախած օպիլիակտօնները:

Նախնական գատարանը մերժած էր ընկերութեան գատար վերաբերել ատեանը այսօր արձակելով իր վճիռը հաստատած է նախնական գատարանի վճիռը նոյնութեամբ:

Հ Յ Ո Ա Գ Ր Ա Վ Ա Ն Լ Ո Ւ Ե Ր

Կ. Պոլս Մայիս 21 — Սուլթան Մուրատի կուսակիցները օր ըստօրէ կը բազմանան: Թուրք կաւալարութեան ուշադրութիւնը վարձած է փարիզի մէջ տեղի ունենալը ընդհանուր ժողովոյ վրայ: Երբեք ընդմիջութեան հետ զհետէ յետէ-թուրքերու կուսակցութեան սկսած են յարիւր Մոճիա Մայիս 21 — Պուլկար խոտվարներու Սէլանիկէ պատմական գատարանի կողմէն գատարարտումը մեծ յուզում և ցասում յառաջ բերած է հասարակութեան մէջ:

Պեղչիկ Մայիս 21 — Քաղուած տեղեկութեանց համեմատ՝ կոմս Ռալաիքը յունիս ամսոյ մէջ պիտի մեկնի Չինաստանէն, և վերադարձին պիտի այցելէ Ճարսը:

Ինքսոնիս Մայիս 21 — Պաշտօնական տեղեկագրի մը համաձայն՝ Ապրիլ ամսոյ մէջ տեղի ունեցած Պօէրներու կորուստը կը հաշուի սապէս հարիւր վաթսուց հինգ սպանուած հարիւր տասն և ութը վերաւորուած երկու հազար հարիւր իննսուն ինը գերի բռնուած և ինքնիւրեն յանձնուած, բանտարկեալներու վերջին թիւը կը հասնի 18,998ի:

Լոնտոն 20 Մայիս. — «Թայլի» կը տեղեկանայ Բէրլին թէ Մէնն Բրիտանիոյ մերձակ մասնակից Վերմանական սրշտանին Չինոս մէջ Անդրիտական և Միացեալ-Նահանգաց պետութիւնները միմիայն կը հակառակին Չինական փոխառութեան՝ օտար տերութեանց կողմէն երաշխարուներն:

Կ. Պոլս 20 Մայիս. — Միջազգային փոթի միջազգայ պատկերացաւ Սուլթանին հրամանաւ ըստ սուսանայի օտար թղթատարութիւնը սկսաւ շարունակել:

Կ. Պոլս 20 Մայիս. — Չորոյ միջոցներ ձեռք առնուած են Երբեքի պարտին մէջ քանի մ'օրէ ի վեր, և նորանոր ձեռքարկութիւններ կատարուած են ձեռն-թուրքերու Սոյզ իրաւութիւնները կը հաստատեն այն սպիկալից գոյցը թէ Սուլթանին կենացը զմ գործարկելու դատաճանութիւն մը պատրաստուած է:

ԱՐՏԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՌԱՆՍՎԱՆԻ ԿՐԹՈՒՍՏԸ

Թաւանավայի և Օրոնտի մէջ 1900 Յունիսէն մինչև 1904 Յունիսի վերջը այրած տուներուն թիւը 164ի կը հասնի, ըստ վերջին պաշտօնական տեղեկութեանց:

ԼՈՐՏ ՍԱԼՁՂՐԻՆԻ ԺԱՌԸ

Անցեալները Լորտ Սալղալըրի՝ Լոնտոն ինիծնիթներու ընկերութեան առջև խոսած իր մէկ ճառին մէջ Պօէրներու նկատմամբ խիստ ոճ մը գործածածելով ըսած էր.

«Թաւանավայի պատերազմը ցոյց տուաւ թէ՛ որքան իրաւացի էինք մենք մեր պահանջները մէջ: Արդարեւ Թաւանավայի պատերազմը Պօէրներու նախամտածումովը պատրաստուած գաւաճանութեան մը արդիւնքն էր, եթէ ըլլէ մը ևս ուշանայինք, հիմախուրն նուազ նպաստաւոր պարագայներու մէջ պիտի գտնուէինք»:

Սալղալըրի կը յարէ թէ «Բացասութի Թաւանավայի պատերազմը ցոյց տուաւ թէ Մէնն Բրիտանիա որքան հզօր տէրութիւն մ'է, թէ իրենց իրկրին ծառայող զինուորը ու զօրապետը որքան արխախտ են»:

ՏՆՏԵՍԱՎԱՆ ՏԱԳՆԱԳ

Ռուսիա անտեսական տագնապը երթալով կը տասականայ Ռուսիոյ մէջ, Արուեստական կրեպով գետ նոր ըսկասը ճարտարագործութիւնը կատարելապէս փակուելու փառնդին մէջ են: Չորս հարիւր գործարաններ գոյուած են, և ապագան շատ մութ կերերի: ՃԱՐՈՆ ԵՐԼՈՍՏԱԿԱՆ ՏԱԳՆԱԳ Կայ ձարօնի մէջ: Երկու հարիւրէ աւելի զրամատուններ վճարումներին դադարեցուցած են, ասանք կը պատահին աւելի այն կեդրոններուն մէջ ուր տարածուած է ճարտարարուեստը:

«Էդ օտոմիթ Պրանտի» նայելով հաւանական է որ շատ մը անակոթիւններ տեղի ունենան յառաջիկային հոն:

ԱՆՐՈՍԻՊԵՐԻԱՆ ԵՐԿԱՌՈՂՆԸ

Այլարհի ամենէն մեծ երկաթուղին է այն որ Եւրոպան Ասիոյ խորերու հետ հաղորդակցութեան պիտի գնէ:

Վիեննայէն զրկուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ յառաջիկայ գարնան պիտի սկսուի Օրէնպէրկէն մինչև Թալիսանտ երկաթուղոյ զմի շինութիւնը: Որով Անդրիպետեան երկաթուղին պիտի մեկնի Մոսկուայէն, Միպերիոյ Սահմանադրուող պիտի կարէ անցնի երթալով մինչև Թալիսանտ ի Թարքիստան, Թալիսանտէն պիտի միանայ Անդր Կասպեան երկաթուղոյն հետ որի դիմը պիտի երկարի մինչև Չինաստանի խորերը:

ՏԵԼԿԱՍՍԵԻ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ի՞նչու համար Ռուսական Նաւատարիլը՝ Իտալական Նաւատարիլին թաւան հասնելէն օր մը առաջ թուրքներէն մեկնելով դնաց օղղակի Վիլֆրանդ ուղևորելու համար Պրանտայի Նախագահը:

Ահա հարց մը զոր Պ. Գալթէլէն ուղղելով Պ. Տէլլատէի՝ հետեւեալ պատասխանը ստացած է:

«Իտալական զրահաւորներու Թուրքոն այցելելը՝ երկու տերութեանց մէջ կիմէ բարեկամական յարաբերականաց նշան կը համարուի, նոյնպէս Ռուսական զրահաւորներու Թալիսանտէն Վիլֆրանդ երթալը նշան կը համարուի թէ՛ նիգօլա Չորը խիստ գոհ մնացած է Պրանտայի հաստատած յարաբերութիւններէն Իտալիոյ հետ»:

ԹՈՂՍՈՑԻ ՆԱԽԱԿԸ

Խոր տպաւորութիւն մը ձգեց ամբողջ Ռուսաստանի մէջ Թալիսայի Չաւրին ազգած մէկ նամակը, ուր ամենէն ազգու կերպով կը բողոքէ իմացական ու քաղաքական յառաջիկայի մեծութեան ընթացքը կասեցնելու համար գործածուած բռնական միջոցներուն դէմ, ուր կը յանձնարարէ որ դիւզական հասարակութեան վրայէն վերջոյն գոյություն չունեցող անասնայի ճշտումները, ջնջուի լուսաւորութեան առջև: Գրուած ամէն խոչնդոտ, շնորհակալութեան կատարեալ աղատութիւն ամէն մարդու, որպէսզի իր խղճով տանք իր պահանջած հաւատարմ գաւաճանի Սահմանադրի կը վերջայնէ իր նամակը, «Ես, Լէս Թալիսայ, ոչ թէ իբր անձնական համազում մը սոսկ գրած եմ այս բողոքագիրը, այլ իբր համազումը Ռուսիոյ իմացական գատակարարին պատկանող միջոցներ անձեռու»:

ՊԱՐՍԻՑ ԾԱՏԸ

Պարսից Շահին հիւանդութիւնը երթալով տեղի փառնդաւոր կը դաւանայ, շնչառութեան դժուարութիւնը ստատկացած է:

Բաւական յուզում կը տիրէ նաև թէ հրանի ժողովրդեան մէջ մտի եւ ուրիշ կերակրեցիկաց վրայ վերջնոր դրուած ծանր մարտերու պատճառաւ ԿԵՆՂԱՆԻ ՊԵՐՆՁՄԱՆԻ ՄԸ ՄԵՃ:

«Մարդուն Իրաւունքը» անուամբ Գալիական ընկերութիւնը Պոլսոյ Օսմաղատանական յանձնարարութեան նախ մը ընդունած է: Յանձնարարութիւնը կապուած ար այն ընկերութիւնը՝ 1876է ի վեր հիւանդութեան և խելացարութեան պատրուակու գահարկից եղած և բանտարկեալ Սուլթան Մուրատի ազատ արձակման ջանտողով հանդիսանայ: Նամակը կրտէ:

Կահնիկց Սուլթանն աւելի ստեղծի մարտիրոսութիւն մը կը կրէ Չրազանի բանտին մէջ քան սե է մին որ սահմանափակեալ է Դեմ ԿՂՁՈՑ մէջ Սուլթանը բանտարկուեցաւ իբր թէ յիմարացած էր: 25 երկար տարիներ մարդ կային դէմք մը տեսած չէ բացի բանտարկուին գէմքէն, ոչ ալ տեսած նամակ մը լրացիր մը կամ զիրք մը: Հրաման չիկայ որ իր սենեակները թողու, նետուած է այսպէս կենթանի գերեզմանի մը մէջ:

Յանձնարարութիւնը կը ստիպէ թէ՛ եթէ իրապէս յիմարացած է՝ զիտական փորձի մը ենթարկուելու է:

ՈՒՍՔՐ

Ապրիլ 23ի կիրակին այս քաղաքը պատահած եղերեւդական դէպք մը մեծ յուզում առաջ բերաւ Հայ գաղութին մէջ: Դատիկ Սիմոնեան անուն անձ մը օւղիվէրով վերաւորեց երկու հայեր, Յակոբ Տոյթումեան, Պապա Գասապեան: Առաջինը մեռաւ երեք շաբթի հիւանդանոցին մէջ: Միւր թեթեակի վերաւորուած է: Դ. Սիմոնեան ձերբակալուած է:

Ասանք ամենքն ուլ Խարբերդի Բէս-

կրկ զիւղէն են : Իրենց զիւղի Ուսումնասիրաց ընկերութեան ներքին խընդիրներն են որ այս խոռովութիւններուն պատճառ դարձան :

Ընկերութիւնը ներկայիս 3000 տուար և 100 անդամ ունի : Իրենց ընդհանուր ժողովին մէջ անդամներու մեծագոյն մասը կը պահանջէ որ գանձապետը Հ. Մ. Մարգարեան վերընտրուի փոքր մաս մըն ալ կը հակառակի այդ պահանջին : Խնդիրը անուշ տեղը կապելու համար կը դիմեն Սարգսեան Եպիսկոպոսին : Եպիսկոպոսը յանձնախումբ մը կ'ընտրէ որ երկու խմբակները հաշտեցնէ : Նորընտիր յանձնախումբն ալ կը պահանջէ որ գանձապետը չընտրուի : Կիրքերը ծայրայեղորէն կը զրգուռին ժողովը կը յետաձգուի Գ. Սիմոնեան որ գանձապետ Մարգարեանի կուսակից էր, ժողովին ետքը իր տունը երթալով դուռին առջև կը նստի : Վերջիջեալ երկու անձերը և Ահարոն Եագրճեան կուգան ու վերջինը նախատալից լեզուով մը կը խօսի Սիմոնեանին Մարգարեանը պաշտպանած ըլլալուն համար : Ետոյ վերաբերէն կը քաշէ : Իր ընկերներէն մէկն ալ կը միանայ իրեն : Սիմոնեան ու վերջիջը կը քաշէ և կ'ըստպանայ պարպել Օգոստ չ'ընելու վերջին փորձէ մը ետքը կը քաշէ ըլլալը ու կը զարնէ : Սիմոնեան փախելու ու է փորձ չըրաւ և ինքզինքը յանձնեց ուստիկանին : Իր քով 1726 տուար պանք պուր մը կար և 33 տուար կանխիկ դրամ : ասոր համար Սիմոնեան կ'ըսէ թէ իր դրամը յախշակելու համար յարձակեցան և անձնապաշտպանութեան համար զտրվաւ :

1901 Յուլիս 1-ից Պարիզում կուսի լոյս տեսնել հայերէն լեզուով « ԺԱՄԱՆԱԿ » Հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական : ԺԱՄԱՆԱԿը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին ևերոպական գրական հանդէսները : անանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտնական ու գեղարուեստական բաժիններին վրայ :

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատկաստականութիւն են յայտնել բազմաթիւ հայ և եւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացել է խմբագրութիւնը :

ԺԱՄԱՆԱԿը բազմաթիւ կը լինի 3 տպագրական թերթերից (80 էրես La Revue et Revue des Revues հանդիսի դիրքով :

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յուլիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. Իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս :

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը տպագրէ ևերոպական երկերի բնագիրը և բնագրական լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին :

Քաջուած է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականներին : Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ : Բաժանորդագրութիւն 1901 քուականի (կիսամեակ)

Ռուսաստան . . . . . 3 ուրբի.  
Անգղիա . . . . . 7 շիլին,

Ֆրանսան, Պուլկարիա . Պարսկաստան, Ռումանիա. Թուրքիա, Եգիպտոս. Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.

Ամերիկա . . . . . 1 գոլար (ոսկի) Բաժանորդագրութիւն 1902 քուականի (12 գիրք)

Ռուսաստան . . . . . 10 ուրբի Անգղիա . . . . . 1 ֆնտ. ստերլին Ֆրանսա, Ռուլլարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 25 ֆրնք.

Բաժանորդագրութիւն 1901 և 1902 քուականի (15 գիրք)

Ռուսիա . . . . . 12 ուրբի Անգղիա . . . . . 1 ֆնտ. ստերլ. և 7 քիլ. Ֆրանսա, Ռուլլարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրնք.

Ամերիկա . . . . . 6 գոլար Ամերիայի տեղերից զիմել հետեւեալ հասցեով.

Paris, (France) 64 rue Claude-Bernard Directeur de la Revue « Jamanak » S. Hakhoumian

### Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը դահայում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետեւ մեր թերթը հատով պիտի ծախուի Ծաւա Ապտ-էլ-Ալիզի սկիզբը Գ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը :

### ՏՈՒՌԱ ՄԻՋԻՒԼՄԱՆ (ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ  
Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Եգիպտական արդարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնահատուած է :

Հատուած և Եգիպտոսի դատարաններուն մէջ գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է :

### ԲՈՎԱՆԳՎԱԿԻԹԻՒՆ

Ինչո՞ւ տեսութիւն ժառանգական օրինաց և ժառանգութեան իրաւաց ծագման վրայ. — Ժառանգութեան պայմանները. — Ազգականութիւն և աստիճանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ժառանգութեան զրկող պատճառներ. — Մարդասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան գինը). — Ժառանգութեան մը պարտքը և պահանջը. — Ժառանգորդներու կարգը իրենց աստիճաններով :

Ժառանգութեան օրէնքին տրամադրութիւնները ուրոյն ուրոյն մեկնուած են : Գրքային վերջը դրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժինները ինչպէս կը բաժնուին :

Երկրորդ մասը մօտ ժամանակէ լոյս պիտի տեսնէ խնամակալութեան կտակի, Ապանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով : Գին 10 ԴԱՆ. ՈՂՊ

### ՊԱՆԳ ԼԻՍՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ

### Մ. ՍՍՍՍՅԵԱՆ

Իրոնի հանրաժանութի գրամատունը, այս անգամ ունեցաւ իր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Միլարիչ Սոսոյեան, որ իւր հրատարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամեհ նուս փոստհոլութիւնը կը վայելէ :

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Իրոնի բազաքաղկեսութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիսնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և

Քուէտի ֆրանսիէի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, գանձումներ : Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ասնէն, պահեստի բաժնեթուղի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած :

Փափաքողները հաճին դիմել Նիւպատի վրայ փաստարան Ռարթաքիի գրասենեակը :

Թղթակցութիւն և կամ դրամ դրուել հետեւեալ հասցէին :

Մ. ՍՍՍՍՅԵԱՆ  
Ի ԳԱՀԻՐԷ

ՊԵՆԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.  
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿԵՐ  
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻՎԱՆՑ  
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ  
Ապիքի մեծ պողոտայի վրայ Տայիւայի Սանիէի դիմացը, նախկին ելեկտրակոն գործիներու վանաւանդը :

Վերջերս Ամերիկայէն հօս եկծա հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ վրանդ Պոստ. յաճախողները, գործի մարտութեան, դիւներու, չափաւորութեան և ճշգրտագոյնութեան կողմէն :

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան գասեր ամերիկեան ամենալեղին կատարելագործուած մէթատով :

Մանրամանութեանց համար դիմել մեր գործատեղին :

Le Gérant J. MUNIER

Տպաւ. « Միլարիւն » — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն  
Ի ԳԱՀԻՐԷ  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ  
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ  
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւաններ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակաղլուխներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն. :  
Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենալա խնամով և ճաշակաւոր սպագրութեամբ :  
ՉՍ.ՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ